

## ՌԴ-ԻԻՀ համագործակցային եվ կոնֆլիկտային պոտենցիալը

Պետրոսյան Ն. Բ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ավագ քաղծառայող, Երևանի պետական համալսարանի միջազգային արարելությունների ֆակուլտետի մագիստրոս, ԵՊՀ հայազիտության հետազոտությունների ինստիտուտի մագիստրանտ (Երևան, Հայաստան)  
nushik.petrosyan@ysumail.am

Հիմնաբաներ՝ ռազմավարական համագործակցություն, կոնֆլիկտային պոտենցիալ, պատժամիջոցներ, Համատեղ գործողությունների համապարփակ ծրագիր, տնտեսական շահ:

### Российско-иранское сотрудничество и конфликтный потенциал

Петросян Н. Б.

ЕГУ, факультет международных отношений, магистр, Ереванский Государственный Университет, Институт Арменоведения, магистрант, Старший государственный служащий Министерства высокотехнологической промышленности (Ереван, Армения)  
nushik.petrosyan@ysumail.am

**Аннотация:** В рамках данной статьи мы представляем результаты исследования факторов, ведущих к сотрудничеству и конфликту в ирано-российских отношениях в современных международных отношениях. Цель исследования – выявить причины сотрудничества и конфликтов в двусторонних отношениях, а задача исследования - классифицировать факторы, приводящие к достижениям и неудачам в двусторонних отношениях.

В ходе исследования мы использовали первоисточники, такие как резолюции ООН, конституции двух стран, Стратегию национальной безопасности Российской Федерации, концепцию внешней политики, а также аналитические работы ведущих западных и российских экспертов.

Мы сравнили и проанализировали данные, также использовали исторический метод исследования.

В результате исследования мы пришли к выводу, что в условиях современных международных реалий две страны являются потенциальными партнерами как на двустороннем, так и на региональном и глобальном уровнях, несмотря на различные проблемы в отношениях, сотрудничество в краткосрочной перспективе не имеет альтернативы.

**Ключевые слова:** стратегическое партнерство, конфликтный потенциал, санкции, комплексный план совместных действий, экономический интерес.

### Russia-Iran cooperation and conflict potential

Petrosyan N. B.

Yerevan State University, Faculty of International Relations, Master's Degree Yerevan State University, Institute of Armenian Studies, Master's student Senior civil servant of the Ministry of High-Tech Industry (Yerevan, Armenia)  
nushik.petrosyan@ysumail.am

**Abstract.** In the framework of this article, we present the results of the study of the factors leading to cooperation and conflict between Russia and Iran in the modern international relations.

The aim of the study is to identify the nature and causes of cooperation and conflict in bilateral relations, and the aim of the study is to classify the factors leading to achievements and failures in bilateral relations.

During the study we used primary sources such as UN resolutions, constitutions of the two countries, the National Security Strategy of the Russian Federation, the foreign policy concept, as well as the analytical work of leading Western and Russian experts. We have compared and analyzed the obtained data, we have also used the historical method of research.

As a result of the study, we came to the conclusion that in the conditions of modern international realities, the two countries are potential partners, in bilateral, regional and global dimensions, despite the various problems in the relations, cooperation has no alternative in the short term.

**Keywords:** Strategic Partnership, Conflict Potential, Sanctions, Comprehensive Joint Action Plan, Economic Interest.

Ռուսաստանի և Իրանի միջև առկա է ռազմավարական համագործակցություն և երկկողմ գործակցության համատեքստում

քաղաքական ու տնտեսական միաձուլվածություն: Ռուսաստանն Իրանի հետ համագործակցում է միջուկային խաղաղանպատակ գիտու-

թյան ոլորտում, նրա դերակատարությունը մեծ է նաև համատեղ գործողությունների համապատասխան ծրագրի ստորագրման գործում: Այսօր չնայած Թրամփի խոստումնադրությանը, Չինաստանի և Եվրամիության կողմից միջուկային գործարքը պարտադիր գործադրվող համաձայնություն է համարվում: Բացի դրանից, Իրան-Ռուսաստան հարաբերությունների կարևոր ցուցիչը՝ տարածաշրջանային ու միջազգային հարցերում միևնույն դիրքորոշումն է, որը համապատասխանում է կայունության ու հավաքական անվտանգության պահպանման ուղղությամբ ստրատեգիական նպատակներին:

Մի շարք օբյեկտիվ պատճառներով Իրանը եվրասիական տարածքի առանցքային երկրներից մեկն է, որի հետ հարաբերությունների զարգացումը անհրաժեշտ է Ռուսաստանին: Այն Մերձավոր Արևելքի ամենամեծ պետությունն է, որը միաժամանակ սահմանակից է Կենտրոնական Ասիային, ունի մեծաթիվ երիտասարդ ազգաբնակչություն, այսինքն՝ երիտասարդ պետություն է: Իրանի ազդեցությունը խթանող մեկ այլ գործոն ինչպես տարածաշրջանային մակարդակում, այնպես էլ միջազգային ասպարեզում այս երկրում նավթի և գազի հսկայական պաշարների առկայությունն է (բնական գազի ապացուցված պաշարներով աշխարհում 2-րդ տեղը 34,000 միլիարդ խորանարդ մետր է, երկրորդը՝ զիջելով միայն Ռուսաստանին այս ցուցանիշով): Այն ունի բավականին մեծ (մերձավորարևելյան չափանիշներով) բանակ: Միջին Արևելքի երկրների միջև առկա մշակութային և պատմական կապերն այնպիսին են, որ ներկայիս քաղաքական իրողություններում Իրանը ի վիճակի է տարածաշրջանի այնպիսի երկրների վրա էական ազդեցություն ունենալ շիաների բազմաթիվ համայնքների միջոցով, ինչպիսիք են Իրաքը, Սիրիան, Լևանտը, Եմենը, Աֆղանստանը և Բահրեյնը: Այս առումով, ազդեցությունը, որն Իրանն ունի Մերձավոր Արևելքում, հաճախ համեմատվում է այն բանի հետ, ինչ Վատիկանը ունի քրիստոնեական, ավելի ճիշտ՝ կաթոլիկ աշխարհում [1]:

1979 թ.-ից ի վեր, երբ տեղի ունեցավ իսլամական հեղափոխությունը Իրանը պարբերաբար ենթարկվում է պատժամիջոցների ազդեցությանը: Այս պատժամիջոցների մեծ մասը կապված էին իսլամական հանրապետության միջուկային ծրագրի հետ: Եվ չնայած 2015-ին, Բ.Օբամայի երկրորդ ժամկետի ընթացքում, վեց կողմերի պայմանավորվածություն է ձեռք բերվել միջազգային պատժամիջոցների վերացման դիմաց Իրանի միջուկային ծրագիրը խափանելու վերաբերյալ, սակայն Թրամփը հայտարարեց պայմանագրից դուրս գալու մասին: Այսպիսով, կարելի է անդել,

որ հակառակ իր նշանակալի ներուժի Իրանը կրկին բախվում է իր դեմ պատժամիջոցների սպառնալիքին: Նման պայմաններում ՌԴ-ն առանցքային դեր ունի պատժամիջոցների հետևանքների վերացման գործում:

### **Երկկողմ հարաբերությունների վրա ազդող հիմնական գործոնները:**

Իրանի Իսլամական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև հարաբերությունները միշտ էլ ունեցել են վերելքներ ու վայրէջներ: Չնայած երկու երկրների պետական գործիչների մոտ առկա քաղաքական կամքը երկկողմ հարաբերությունները զարգացնելու համար հաճախ միանշանակ չէ, Իրանի նախկին դեսպան Մ. Սադջադիի խոսքով՝ «... այսօր չկա Ռուսաստանի նման այլ պետություն, որը Իրանի հետ այնքան շատ ընդհանուր հետաքրքրություններ և ընդհանուր տեսակետներ ունի» [2], այնուամենայնիվ դեռ շատ խնդիրներ կան ռուս-իրանական համագործակցության ընդլայնման ճանապարհին:

Այսպիսով կարող ենք նկատել, որ երկկողմ համագործակցությունը փոխադարձաբար շահավետ է ու բխում է երկու երկրների քաղաքական առաջնահերթություններից:

1) Ռուս-իրանական հարաբերությունների իրավաբանական հիմքը 2001 թ մարտի 12-ին ստորագրված համաձայնագիրն է: ՌԴ նախագահ Պուտինը եւ ԻԻՀ նախագահ Մ. Իսթամին Մոսկվայում ստորագրեցին համաձայնագիր՝ երկկողմ համագործակցության սկզբունքների շուրջ: Այն առնչվում էր հատկապես ռազմատեխնիկական, առևտրական, տնտեսական, էներգետիկ ոլորտներին (հոդված 8):

Պայմանագրի համատեքստում անհրաժեշտ է շեշտադրումը կատարել 3-րդ հոդվածի վրա. «այն դեպքում, երբ Կողմերից որևէ մեկը ենթարկվում է ագրեսիային որևէ պետության կողմից, մյուս կողմը չի կարող որևէ ռազմական կամ այլ օգնություն ցուցաբերել ագրեսորին՝ նպաստելով ագրեսիայի շարունակմանը և կապահովի, որ ծագող տարածայնությունները լուծվեն ՄԱԿ-ի կանոնադրության և միջազգային ստանդարտների հիման վրա» [3]: Այս դրույթը հատկապես վկայում է անվտանգային միևնույն քաղաքականության մասին ու հատկապես նրա մասին, որ սպառնալիքները երկուսի համար էլ միևնույն բնույթի են:

Որպես հակադրություն կարող ենք նշել Ռուսաստանի Դաշնության՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարաբերությունների վերաբերյալ իրավական փաստաթղթերի ոչ մեծ քանակը և իրավապայմանագրային դաշտի ոչ ամբողջական լինելը, երկկողմ հարաբերությունների

բնույթի ոչ հստակ սահմանումը, նաև այն, որ Մոսկվան չունի Իրանի հետ հարաբերությունների վերաբերյալ որոշումների կայացման հիմնական կենտրոն, որը պատասխանատու է ձևակերպելու և իրագործելու կառավարության ռազմավարությունը Իսլամական Հանրապետության նկատմամբ՝ ի պատասխան հնարավոր մարտահրավերների կամ սպառնալիքների, անորոշություն է ստեղծում, որի պատճառով Ռուսաստանի Դաշնության տարբեր պետական մարմիններ, կազմակերպություններ, անկազմակերպ և ոչ համակարգված, տարբեր մակարդակի հարաբերություններ կարող են հաստատել Իրանի Իսլամական Հանրապետության հետ՝ լրացուցիչ անկարգություններ բերելով ռուս-իրանական հարաբերություններին և դրանց հետագա ամրապնդմանը: Բացի այդ համաձայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 80, 84 և 86 հոդվածների Ռուսաստանի Դաշնության նախագահը սահմանում է Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուղենիշները, իսկ կառավարությունը պատասխանատու է իր որոշումների կատարման համար (հոդված 114 [4]): Այնուամենայնիվ, դժվար է գտնել որևէ փաստաթուղթ՝ գրված կամ նախագահի աշխատակազմի կամ կառավարության կողմից, որտեղ հստակ սահմանված է Ռուսաստանի ռազմավարությունը Իրանի Իսլամական Հանրապետության նկատմամբ: Պետք է նշել, որ Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության վեկտորները և գերակայությունները հիմնականում սահմանվում են արտաքին քաղաքականության պաշտոնական դոկտրիններում և ռազմավարություններում: Վերջերս շրջանառության մեջ մտած այդ պաշտոնական դոկտրիններից միայն չորսում անդրադարձ կա Իրանի հետ հարաբերություններին՝

- 1) «Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հայեցակարգում» (ընդունվել է 2008 թվականի հուլիսի 12-ին),
- 2) Արտաքին քաղաքականության հայեցակարգի առաջին հավելվածում, որը վերնագրված է «Ռուսաստանի Դաշնության քաղաքականության հիմնական ուղղությունները միջազգային մշակութային և հումանիտար համագործակցության ոլորտներում» (ընդունվել է 2010 թվականի դեկտեմբերի 18-ին),
- 3) «Ռուսաստանի Էներգետիկ ռազմավարությունը մինչև 2030 թվականը» կոչվող փաստաթղթում (ընդունվել է 2009 թվականի

նոյեմբերի 13-ին),

4) «Ռուսաստանի Դաշնության հայեցակարգը Միջազգային գիտատեխնիկական համագործակցության ոլորտում» փաստաթղթում (ընդունվել է 2000 թվականի հունվարի 20-ին):

Սակայն այս փաստաթղթերում հստակորեն արտացոլված չէ Ռուսաստանի Դաշնության ռազմավարությունը Իրանի նկատմամբ: Իհարկե, Ռուսաստանի իշխանությունները շահագրգռված են շարունակել երկխոսությունը Թեհրանի հետ երկկողմ և բազմակողմ ձևաչափերում, այնուամենայնիվ չկան հստակ իրավական ուղենիշներ դրանց կանոնակարգման և հետագա զարգացման և ամրապնդման համար: Ռուսաստանի Դաշնության՝ Իրանի հետ հարաբերությունների վերաբերյալ իրավական փաստաթղթերի ոչ լիարժեք լինելը ավելի ակնհայտ է դառնում, երբ համեմատվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Եվրոպայի և այլ տարածաշրջանների հետ հարաբերությունների, երկկողմ համագործակցության վերաբերյալ մշակված և ընդունված փաստաթղթերի, որոնք մեծ հաշվով բացակայում են Իրանի պարագայում: Հետագայում, 2001 թվականի մարտի 12-ին Ռուսաստանի Դաշնության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ստորագրվեց համաձայնագիր երկկողմ համագործակցության սկզբունքների շուրջ, որտեղ բացի երկկողմ փոխշահավետ դրույթներից բացի կային որոշակի անորոշություններ [5]: Պայմանագրում չի սահմանվում, թե երկու երկրների միջև երկխոսությունը ռազմավարական է, թե նման է գործընկերության, այլ նշվում է, որ այն պարզապես «համապատասխանում է երկու պետությունների հիմնական շահերին»: Սա, իր հերթին, կարելի է ասել խորհրդանշում է Ռուսաստանի Դաշնության՝ Իրանի ընկալման և նրա հետ հարաբերությունների

առանձնահատկությունների մասին:

- 2) 2007 թ. ստորագրվել է համաձայնագիր Ս-300 զենիթահրթիռային համակարգերի մատակարարման մասին, թեև 2010-ին ՄԱԿ-ի ԱԻՄ-ն կիրառեց պատժամիջոցներ Իրանի դեմ, և արգելվեց ժամանակակից զինատեսակների Իրան մատակարարումը: Իրանի իշխանությունները դիմեցին Ժնևի արբիտրաժային դատարան՝ ներկայացնելով հայց Ռուսաստանի դեմ՝ 4մդ դրոյար արժողությամբ, սակայն Վ.Պուտինը 2015-ին վերացրեց Ս-300-ի մատակարարման արգելքը [6]: Ավելին Իրանի զինված ուժերը

և Ռուսաստանի Պաշտպանության նախարարությունը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր՝ երկկողմ կապերը ընդլայնելու նպատակով: Այն կարող է դիտվել որպես շրջադարձային պահ պաշտպանության ոլորտում Թեհրանի և Մոսկվայի հարաբերություններում [7]:

Մյուս կողմից Ռուսաստանի իշխանությունները շահագրգռված չեն Իրանի հետ գործընկերության հռչակմամբ և նրանց հետ երկխոսության մակարդակի հստակեցմամբ: 2007 թվականին կողմերի միջև ստորագրված համաձայնագրով՝ U-300 զենիթահրթիռային համակարգերի մատակարարման մասին, երկու երկրների միջև հարաբերություններում որոշակի լարվածության հանգեցրեց: 2007 թվականին Ռուսաստանը պայմանավորվեց Իրանին վաճառել հինգ S-300PMU-1/SA-20 Gargoyle SAM համակարգեր (40 գործարկիչ) 800 միլիոն դոլարով: Այնուամենայնիվ, որպես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2010 թվականի հունիսին ընդունված բանաձևի հետևանք, որը պատժամիջոցներ էր նախատեսում (ներառյալ ժամանակակից զենքի վաճառքի արգելքը) Իրանի նկատմամբ իր հակասական միջուկային ծրագրի հետ կապված, Ռուսաստանը չեղյալ հայտարարեց հրթիռների առաքումը և դադարեցրեց ռազմատեխնիկական համագործակցությունը Իրանի հետ, որի դիմաց Իրանը պահանջեց 4 միլիարդ դոլար փոխհատուցում: Կարծում ենք, որ դրանով էր պայմանավորված Ռուսաստանի վերաբերմունքը Իրանի միջուկային ծրագրի նկատմամբ, երբ չընդդիմացավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդի՝ Իրանի դեմ պատժամիջոցներ կիրառելուն (ընդունվեցին 1696, 1737, 1747, 1803, 1835, 1929 բանաձևերը, որոնք ստեղծեցին իրավական հիմք՝ Իրանի նկատմամբ ինչպես բազմակողմանի, այնպես էլ միակողմանի պատժիչ միջոցներ կիրառելու համար): Ավելին, Մոսկվան Թեհրանի դեմ ընդունեց միակողմանի պատժամիջոցներ 2010 թվականի սեպտեմբերին [8]: Չնայած երկկողմ հաճախակի փոխայցելություններին, կողմերի միջև համարյա ոչ մի լուրջ պայմանագիր չի կնքվել (բացառությամբ 2014 թվականի պայմանագրի): Պետք է նաև նշել, որ հաճախ կողմերի միջև պայմանավորվածությունները գործնականում չէին իրականացվում:

- 3) Ռուս-իրանական քաղաքական երկխոսությունը հիմնված է աշխարհի և տարածաշրջանային օրակարգի շատ հարցերի շուրջ երկու երկրների դիրքորոշումների համընկնելու կամ նմանության վրա, մասնավորապես, բազմաբևեռ համաշխար-

հային կարգի կառուցում, ՄԱԿ-ի դերի ամրապնդում միջազգային գործերում, նոր մարտահրավերներին ու սպառնալիքներին հակազդելու, Սիրիայի և Իրաքի կարգավորմանը, Աֆղանստանում տիրող իրավիճակին. Ռուսաստան-Իրան հետ համագործակցությունը կարևոր պայման է ազգային շահերը ապահովելու, Կովկասում և Կենտրոնական Ասիայում և Մերձավոր Արևելքում կայունության ամրապնդման համար: Ռուսաստանի և Իրանի միջև մշտական շփումները պահպանվում են ամենաբարձր և բարձր մակարդակներում [9]:

Սակայն սրան ի հակադրություն առկա է դիրքորոշումների տարբերություն երկկողմ հարաբերությունների ձևի և դրանց ապագա տեսլականի վերաբերյալ: Ընդհանրապես, Ռուսաստանի քաղաքականությունը հարևան պետությունների հետ հիմնականում հիմնված է չորս հիմնական սկզբունքների վրա՝ այն է՝ պահպանել Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգության շահերը սահմանամերձ շրջաններում, որի համար պահանջվում է կանխել տեղական հակամարտությունները և կարգավորել առկա լարվածությունները, կանխել հարևան պետությունների՝ զանգվածային ոչնչացման զենք ձեռք բերելու հնարավորությունը, հակակշռել որոշ ուժերի աճող ներկայությունը հարևան երկրներում, ամրապնդել հարևան երկրների հետ համագործակցությունը ահաբեկիչների դեմ պայքարում: Այս սկզբունքները երկակի հետևանքներ են ունենում Իրանի համար: Մի կողմից, հաշվի առնելով նրանց մոտեցումների և դիրքորոշումների համանմանությունը տարածաշրջանային մի շարք հարցերի վերաբերյալ, Մոսկվան Թեհրանին դիտում է որպես Կովկասում, Կենտրոնական Ասիայում և Կասպյան տարածաշրջանում իր կարևոր գործընկեր: Մյուս կողմից, Ռուսաստանի իշխանությունները ամբողջովին չեն վստահում Թեհրանին: Նրանք անհանգստանում են Իրան-ԱՄՆ հավանական մերձեցմամբ, և Իրանի հնարավոր դերի մասին որպես մեկ այլ հակամարտության ելակետ: Իրանական կողմը ևս անվստահություն ունի ռուսական կողմի նկատմամբ, հատկապես երբ շրջանառվում էր հարաբերությունների կցման քաղաքական գծի տարբերակը, քանի որ դա Իրանին կզրկեր ազատորեն և ինքնուրույն որոշումներ կայացնելու և իր հնարավորությունները ցույց տալու հնարավորությունից: Այն, որ Իրանը չի պատրաստվում Ռուսաստանի կցորդը և

շահերի սպասարկուն դառնալ, փաստվեց, օրինակ, ընթացիկ 2016 թվականի սկզբին, երբ Իրանը չմիացավ Ռուսաստանին և Սաուդյան Արաբիային՝ չզնայով նավթի համաշխարհային ծավալների արդյունահանման սառեցմանը:

- 4) Թեհրանն ու Մոսկվան չունեն տարածայնություններ միջինարեւելյան օրակարգի առանցքային հարցերում, մանավորապես, սիրիական հակամարտության կարգավորման գործում: Այս առումով երկու կողմերն էլ հանդիսանում են Ասադի ռեժիմի աջակիցներ և փորձում են սահմանափակել Արևմուտքի դիրքերը տարածաշրջանում ու ապահովել սեփական ազդեցության գերիշխումը Սիրիայում, ինչը կհանգեցնի դոմինոյի էֆեկտի. այսինքն՝ ռուս-իրանական ազդեցության տարածման ողջ ռեգիոնում: Այսինքն արտաքին քաղաքական օրակարգում ունեն նմանաբովանդակ անվտանգային խնդիրներ ու ուղղվածություն:

Չնայած երկու երկրների՝ միջազգային և տարածաշրջանային օրակարգի շատ հարցերի շուրջ դիրքորոշումների համընկնմանը, երկու երկրները նաև ունեն հակասություններ և տարբեր դիրքորոշումներ որոշակի հարցերի շուրջ: Առաջին հերթին, ոչ միանշանակ է երկու երկրների՝ Մերձավոր Արևելքի երկրների հետ համագործակցության հարցը: Ռուսաստանի Դաշնությունը ունի լավ հարաբերություններ և հակված է համագործակցել Սաուդյան Արաբիայի և Իսրայելի հետ, որոնք Իրանի Իսլամական Հանրապետության թիվ մեկ հակառակորդների շարքում են: Ռուսաստանի Դաշնությունը ակտիվորեն համագործակցում է նաև Ծոցի երկրների համագործակցության խորհրդի երկրների հետ:

Պետք է նաև նշել, որ երկու երկրների դիրքորոշումները և քաղաքականությունը լիովին չեն համընկնում Աֆղանստանում, Իրաքում և Սիրիայում: Իրանի ներկայությունը և ազդեցությունը այդ երկրներում ճնշում է ռուսներին, և որպես արդյունք միակ բանը, որով Ռուսաստանը կարող է առաջարկել դա կլինի բարոյահոգեբանական աջակցությունը, որն էլ իր հերթին կհանգեցնի ռուսական կողմի՝ որպես թույլ խաղացողի ընկալման իրանական կողմի կողմից:

Միանշանակ չեն նաև դիրքորոշումները Սիրիական հիմնախնդրում: Ճիշտ է, երկու երկրները լիովին համաձայն են, որ Սիրիայի կառավարությունը չպետք է փոփոխվի, այնուամենայնիվ, նրանք այս ամենում

ունեն տարբեր շահեր և նպատակներ: Ռուսաստանը ունի տնտեսական, ռազմավարական շահեր, որոնք փորձում է իրացնել հակամարտության միջոցով: Ռուսաստանը, ըստ մի շարք փորձագետների, փորձում է Սիրիական հակամարտության միջոցով ռազմական և դիվանագիտական լծակներ ստեղծել, որոնք կկիրառի ամենատարբեր նպատակներով [10]: Այսպիսով, Ռուսաստանը օգտագործում է իրավիճակը նաև իր հնարավորությունները ցույց տալու համար: Նրանք, կարելի է ենթադրել, կաջակցեն Սիրիայի ֆեդերալիզացիային կամ նույնիսկ հավանական ընտրություններին՝ կոնֆլիկտի հետագա կառավարման համար: Պետք է նաև նշել, որ Ասադի ռեժիմը Ռուսաստանը համարում է իր երաշխավորը դեպի Միջերկրական ծով իր անարգել մուտքի համար (Տարտուսի նավային բազա): Ըստ ռուսների, կայուն սիրիական ղեկավարությունը ի վիճակի է կառավարել ռադիկալ իսլամիստների հարցը, որի սպառնալիքը հենց առկա է նաև Ռուսաստանում: Իրանը այլ դիրքորոշումներ ունի այս բոլոր հարցերում: Ի տարբերություն Մոսկվայի, Թեհրանը ավելի հստակ նպատակներ ունի սիրիական կառավարության հետ կապված՝ մասնավորապես Բաշար ալ Ասադի հետ, որի կառավարությունը հիմնականում ալաուի էթնիկ խմբի ներկայացուցիչներ են, որը պատկանում է Իսլամի շիա ուղղությանը: Այսինքն, Իրանը կրոնական հիմքի վրա կձգտի պահպանել սիրիական կառավարությանը: Իրանը դեմ է նաև ապագայում իրականացվելիք ընտրություններին: Ինչպես գիտենք, Իրանը աջակցում է Հեզբոլլահ խմբավորմանը, որն էլ իր հերթին օգնում է նվազեցնել նաև իսրայելական սպառնալիքները: Այսինքն՝ կորցնել Ասադի ռեժիմը նշանակում է կորցնել Իրանի դաշնակիցների մատակարարման աղբյուրը: Իսկ եթե սուննիական կառավարություն գա իշխանության, հավանական է, որ Իրանը կառեթսվի Սաուդների ընդդիմությանը [11]: Այսպիսով, այս հարցում բավականին տարբերություններ կան ռուս-իրանական դիրքորոշումներում:

- 5) Որպես համագործակցային պոտենցիալ կարելի է դիտել նաև համագործակցության աշխարհաքաղաքական ուղղությունը: ՌԴ-ն նպատակահարմար է համարում անկախ արտաքին քաղաքական դրությունից հարաբերությունների զարգացումը Իրանի հետ որը իր համար հենարան է միջինասիական տարածաշրջանում, իսկ Իրանի համար էլ կարևոր է համագործակցությունը ՌԴ-ի հետ, քանի որ առկա պատժա-

միջոցների ֆոնին ծանր հետևանքներից կարելի է միայն ՌԴ-ի վրա հենվելով խուսափել [12]:

- 6) ՌԴ-Իրան համագործակցության մեջ իր ուրույն դերն ունի նաև Հարավային Կովկասը: Հարավկովկասյան տարածաշրջանում ընթացող զարգացումներն այժմ առավել քան նախկինում փոխկապակցված են գլոբալ հարթությունում ընթացող զարգացումների հետ: Միաժամանակ Իրանի մկջուկային ծրագիրը անդրադարձ է ունենում ռեզիդնում մեծ դերակատարում ունեցող պետությունների քաղաքականության վրա: Երկկողմ ուշադրության կենտրոնում են նաև Կովկասի հիմնախնդիրները, քանի որ երկուսն էլ վախենում են տարածաշրջանում արտաքին ազդեցության աճից ու իրենց զգում են պատմական առաջնորդներ:

Հարավային Կովկասի հարցում միանշանակ կարող ենք նշել, որ այն նաև կոնֆլիկտային գործոն է երկկողմ հարաբերությունների կառուցման ճանապարհին: Ռուս-իրանական համագործակցության ազդեցության հնարավորությունները Հարավային Կովկասի էներգետիկ շուկայի և աշխարհաքաղաքական իրողությունների վրա բավականին սահմանափակ են: Իրանը Ռուսաստանին վերաբերում է կասկածամտորեն, ուստի համագործակցության հարցում կլինի զգույշ և գործարքների կգնա միայն այն դրսևներում, որոնք բխում են իր շահերից: Այսինքն, այդ ազդեցության շրջանակները սահմանափակ են, քանի որ սահմանափակ են տարածաշրջանում Ռուսաստանի և Իրանի համագործակցության հնարավորությունները: Ռուսաստանը և Իրանն այս տարածաշրջանում մրցակիցներ են: Այս երկրների հիմնական նպատակն ազդեցության ուժեղացումն է Հարավային Կովկասում: Բացի այդ Իրանը ոչ միայն կասկածամտորեն է վերաբերում Ռուսաստանին, այլ նաև մեղադրում է Մոսկվային պարսկական կայսրության թուլացման մեջ: Այսպիսով, տարածաշրջանային հեգեմոնիայի համար պայքարը կսահմանափակի և կխոչընդոտի տարածաշրջանում ռուս-իրանական մերձեցմանը:

- 7) ՌԴ-Իրան համագործակցության կարևորագույն հիմք է նաև ընդհանուր տնտեսական շահը: ՌԴ-ն ֆինանսական հսկայական միջոցներ է ձեռք բերում արդյունաբերության բարձր տեխնոլոգիաների զարգացման համար: Ռուսաստանը չի ճանաչում Միացյալ Նահանգների կողմից միակողմանիորեն Իրանի դեմ կիրառվող անօրինական պատժամիջոցները և նրանց հետ, ովքեր

դրանով զբաղվում են: Առկա է կայուն առևտրատնտեսական համագործակցություն: 2018-ի վերջին Ռուսաստանի և Իրանի արտաքին առևտրի ծավալը կազմել է 1,7 միլիարդ դոլար, այդ թվում՝ Ռուսաստանի արտահանումը՝ 1,2 միլիարդ դոլար, իսկ ներմուծումը՝ 533,1 միլիոն դոլար: Երկկողմ համագործակցության զարգացման գործում կարևոր դեր է խաղում գյուղատնտեսությունը:

Տնտեսական առումով ևս լիարժեք չէ երկրների համագործակցությունը: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով, օրինակ հենց Իրանի դեմ պատժամիջոցներով, որոնք ևս խոչընդոտում են երկու երկրների միջև հարաբերությունների էլ ավելի խորացմանը: Ավելին, 2011 թվականից երկու երկրների միջև առևտրաշրջանառության մակարդակը նվազել է տարեկան 30 տոկոսով, և 2014 թվականից 1,5 մլրդ դոլլարի, այսինքն՝ երկու անգամ ավելի ցածր քան ռուս-եգիպտական և ռուս-իսրայելյան առևտրաշրջանառությունները [13]:

Ներկայումս Իրանը նավթ է արտահանում Եվրոպա, ինչի արդյունքում դարձել է Ռուսաստանի մրցակիցը: Մոտ ապագայում Իրանը կարող է գազ արտահանել նաև դեպի Եվրոպա, ինչի հետևանքով Մոսկվայի և Թեհրանի միջև մրցակցությունն ավելի կսրվի:

Երկկողմ հարաբերությունների էլ ավելի խորացմանը խոչընդոտում է նաև Իրանի միջուկային ծրագիրը և Արևմուտքի պատժամիջոցները: Ռուս-իրանական միջուկային պայմանագիրը կնքվել է 2014 թվականի նոյեմբերին, սակայն այն ինքնին բավարար չէր տնտեսական հարաբերությունների զարգացման համար: Չնայած որ պայմանագրով նախատեսվում էր 8 միջուկային կենտրոնների ստեղծում, որոշ վերլուծաբաններ նշում են, որ դժվար կլինեք անգամ 1-2 կենտրոնների ստեղծումը հետագա տասնամյակում, ուստի դժվար կլինի խոսել նաև ավելի մեծ թվի մասին:

Բացի գունավոր մետաղներից, փայտից ու նավթաքիմիկատներից Ռուսաստանը ունի ապրանքների շատ նեղ տեսականի, որոնք կարող է առաջարկել Իրանին, որի ոչ ժամանակակից, նոր չլինելու պատճառներից է նաև, ըստ որոշ վերլուծաբանների, Ռուսաստանի Դաշնություն - Արևմուտք տեխնոլոգիական ճեղվածքը: Իրանը ներկայումս ունի ինժեներական ու տեխնիկական աջակցության կարիք, սակայն Ռուսաստանը, կարելի է ասել, ի վիճակի չէ ապահովել և աջակցել նրան այդ ամենով:

Ընդհակառակը, հենց Ռուսաստանը ևս այդ ամենի կարիքը ունի:

- 8) Ռուս-իրանական հարաբերությունները զարգանում են նաև մշակութային, հումանիտար ու գիտակրթական ոլորտներում: Դրա վառ դրսևորումը ռուս-իրանական «Ուղղափառություն-իսլամ» համատեղ համաժողովն է:

Երկու երկրների հետ հարաբերությունների վրա ազդեցություն ունեն նաև սոցիալ-մշակութային, գաղափարախոսական, կրոնական որոշակի գործոններ: Մասնավորապես, կրոնա-գաղափարախոսական խնդիր կա ներքուսաստանյան կյանքում: Մահմեդական ռուսների մեծ մասը Իսլամի Սուննի ուղղության հետևորդներ են, որոնք կազմում են Ռուսաստանի Դաշնության բնակչության 15 տոկոսը: Ավելին, նրանց կողմից հաճախ են դրսևորվում անջատողական դրսևորումներ: Այս ամենից ելնելով Ռուսաստանը փորձում է նրանց հետ հարաբերություններ պահպանել և հասկանալ նրանց տրամադրությունները: Այսինքն, նրանք կարևոր նշանակություն և ազդեցություն ունեն Ռուսաստանի Դաշնության որոշումների կայացման գործընթացի վրա, և հաճախ անգամ դժգոհություն են արտահայտում շիական պետության հետ հարաբերությունների խորացման կապակցությամբ:

- 9) Ռուսաստանի և Իրանի երկարաժամկետ մերձեցմանը կարող է խանգարել նաև իսրայելական գործոնը: 2015 թվականի սեպտեմբերի 21-ին Իսրայելի վարչապետ Նեթանյահուի՝ Ռուսաստանի Դաշնություն կատարած այցի ընթացքում ձեռք են բերվել մի շարք երկկողմ կարևորության մի շարք համաձայնություններ: Առաջին հերթին, Ռուսաստանը երաշխավորել է, որ Մերձավոր Արևելքում իր գործողություններով վնաս չի հասցնի Իսրայելի շահերին: Կողմերը համաձայնել են նաև Սիրիայի հետ կապված տեղեկատվություն փոխանակել: Իսկ այն բանից հետո, երբ Ռուսաստանը սկսեց ավիահարվածներ իրականացնել Սիրիայում, Նեթանյահուն հայտարարեց, որ չնայած Իսրայելի և Ռուսաստանի Դաշնության հետապնդած նպատակները Սիրիայում չեն համընկնում, այնուամենայնիվ, սա չի կարող հանգեցնել երկու երկրների բախմանը: Իսրայելում զգուշավորություն են դրսևորում ռուս-իրանական հնարավոր դաշինքի ձևավորման հարցում, քանի որ այդպիսով հնարավոր է Իրանի համար Իսրայելի դեմ գործելու բազա ստեղծվի: Ամեն դեպքում, երկարաժամկետ հեռա-

նկարում Ռուսաստանը ստիպված կլինի կանգնել Իրան-Իսրայել ընտրության առաջ:

- 10) ԵԱՏՄ-ի ու Մաքսային միության հետ համագործակցությունը Իրանի համար հնարավորություն է բազմապատկել տարածաշրջանային առևտրում իր ներկայությունը ու ՌԴ-ի հետ հարաբերությունները երկկողմ ձևաչափից բազմակողմ տեղափոխելու համար [14]: ԵԱՏՄ-ի ու Մաքսային միության հետ համագործակցությունը Իրանի համար հնարավորություն է բազմապատկել տարածաշրջանային առևտրում իր ներկայությունը:
- 11) Համագործակցության ուժեղ կողմերից կարող ենք առանձնացնել նաև Շանհայի համագործակցության կազմակերպությունը: Վերջինս արտահայտում է կողմերի միջև փոխհամաձայնեցված արտաքին քաղաքականությունը, փոխշահավետ համագործակցությունը նաև նպաստում երկկողմ խորհրդատվայթյուններին: ԵՀԿ ձեռաչափով Իրանը գնալով ավելի ազդեցիկ դերակատար է դառնում, քանի որ կառույցում ընդրկված լինելով ՌԴ-ն ու Իրանը լրացուցիչ հնարավորություն են ձեռք բերում մերձեցման համար:
- 12) Երկկողմ համագործակցությունը փոխշահավետ է քանի որ նշանակում է ամերիկյան ազդեցության թուլացում Մերձավոր ու Միջին Արևելքում: Այն նաև թուլացնում է ԱՄՆ-ի կողմից Իրանում ռազմական գործողությունների հավանականությունը:
- 13) Համագործակցություն Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում անվտանգության եւ զարգացման խնդիրների լուծման գործում: Էներգետիկայի, ենթակառուցվածքների, տրանսպորտի ոլորտում համագործակցությունը միակ միջոցն է կանխելու իսլամական ահաբեկչության ու արմատականության ռիսկերը Կենտրոնական Ասիայում: Ռուսաստանի մահմեդական շրջաններում և Կենտրոնական Ասիայում իսլամի քարոզչության հարցում Իրանի կողմից «խաղի կանոնների» պահպանումը խելամիտ քայլ է:
- 14) Հյուսիսային Աֆրիկայում ու Պարսից Ծոցի ավազանում քաղաքական իրավիճակի կայունացման, սիրիական ճգնաժամի լուծման հարցում համագործակցության, Արաբական զարնան իրադարձություններում Ռուսաստանի ու Իրանի մոտեցումներում ընդհանրությունները առանցքային նշանակություն ունեն հարաբերությունների կառուցման համար: Երկուսն էլ դեմ են ընդդիմադիր բողոքներին, քանի որ գիտակցում են դա տանում է ամերիկյան ազդեցության աճին տարածաշրջանում

